ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

6 հունիսի 2014, 14 – L

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՓՈՐՁԱՇՁԱՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արդարադատության ակադեմիայի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և Արդարադատության ակադեմիա՝ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 19-րդ կետի 11-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ռեկտորի առաջարկությունը՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը ***որոշում է.***

Հաստատել ունկնդիրների մասնագիտական պատրաստման ընթացքում փորձաշրջանի անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ՝
Հ.Բեդևյան

2014թ. հունիսի 6

f .Երևան

Հավելված
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2014 թվականի
հունիսի 6-ի թիվ 14-Լ որոշման

ԿԱՐԳ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Ակադեմիա) մասնագիտական պատրաստում անցնող դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ ունկնդիր) փորձաշրջանի կազմակերպումն և անցկացումը, ունկնդիրների փորձաշրջանի գնահատման չափանիշները, փորձաշրջանի բովանդակության նվազագույն պահանջները, փորձաշրջանից հետո ներկայացվող հաշվետվության և գնահատագրի ձևերը ներկայացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթները:

2. Փորձաշրջանը ունկնդիրների ինքնուրույն գործելու կարողությունների ձևավորման նպատակով իրականացվող գործընթաց է, որի խնդիրներն են ունկնդիրների մասնագիտական հմտությունների ձևավորումը և կատարելագործումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը, ինչպես նաև, համապատասխանաբար, դատական և դատախազական գործունեության ընթացքում ձևավորված սովորութային կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքի և փորձառության ձեռքբերումը:

II.ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ՈՒՆԿՆԴԻՐԸ

3. Ռեկտորը ըստ կոնկրետ ունկնդիրների՝ փորձաշրջանի ղեկավարներին նշանակում է ոչ ուշ, քան փորձաշրջանը սկսելուց 2 օր առաջ:

4. Փորձաշրջանի ընթացքում փորձաշրջանի ղեկավարի գործուման, արձակուրդի կամ այլ համարժեք հիմքով՝ 1 շաբաթ կամ ավել տևող բացակայության դեպքում փորձաշրջանի ղեկավարն իրավասու է, ռեկտորի համաձայնությամբ, տվյալ ունկնդրի փորձաշրջանի ղեկավարումը ժամանակավորապես հանձնել տվյալ դատարանի մեկ այլ դատավորի կամ դատախազության տվյալ ստորաբաժանման մեկ այլ դատախազի:

5. Փորձաշրջանի ղեկավարն իրավունք ունի՝

5.1. անհատական ծրագրից բխող հանձնարարություններ տալ ունկնդրին.

5.2. ցանկացած պահի ստուգել ունկնդրի կողմից փորձաշրջանի անհատական ծրագրով նախատեսված առաջադրանքների և դրանցից բխող իր հանձնարարությունների կատարման ընթացքը.

6. Փորձաշրջանի ղեկավարը պարտավոր է՝

6.1. կազմակերպել ունկնդրի ուսուցումը Ռեկտորի հաստատած անհատական ծրագրին համապատասխան.

6.2. իրականացնել նրա գործունեության նկատմամբ ղեկավարում և անմիջական հսկողություն.

6.3. նպաստել ունկնդրի մասնագիտական գիտելիքների խորացմանը, գործնական հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը.

6.4. հետևել ունկնդրի կողմից անհատական ծրագրով նախատեսված պարտականությունների պատշաճ կատարմանը.

6.5. փորձաշրջանի ընթացքում ունկնդրի կողմից թերացումներ նկատելու դեպքում հայտնել ունկնդրին, իսկ էական թերացումներ նկատելու դեպքում՝ նաև Ռեկտորին:

7. Ունկնդիրն իրավունք ունի՝

7.1. անհատական ծրագրում նշված առաջադրանքների կատարման նպատակով ուսումնասիրել անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր.

7.2. փորձաշրջանին վերաբերող ցանկացած հարցով խորհրդակցել փորձաշրջանի ղեկավարի հետ.

7.3. Ակադեմիայի աշխատակազմից պարզաբանումներ ստանալ փորձաշրջանի ընթացքում առաջացող հարցերի կապակցությամբ:

8. Ունկնդիրը պարտավոր է՝

8.1. պատշաճ կերպով կատարել անհատական ծրագրով նախատեսված առաջադրանքները, փորձաշրջանի ղեկավարի՝ անհատական ծրագրից բխող հանձնարարությունները.

8.2. պահպանել աշխատանքային և կատարողական կարգապահությունը.

8.3. փորձաշրջանի յուրաքանչյուր շաբաթվա վերջին փորձաշրջանի ղեկավարին և Ակադեմիայի աշխատակազմ ներկայացնել հաշվետվություն իրականացված աշխատանքի վերաբերյալ:

III.ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

9. Փորձաշրջանի յուրաքանչյուր օրվա տևողությունը հավասար է 10 ակադեմիական ժամվա:

10. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին *(Ձև 1)* համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ ուսուցման ծրագրում նշված ուղղությունների:

11. Անհատական ծրագրերը մշակվում են հետևյալ օրինակելի ձևերի հիման վրա՝

11.1. քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց անհատական ծրագիր.

11.2. քրեական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց անհատական ծրագիր.

11.3. վարչական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց անհատական ծրագիր.

11.4. դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց անհատական ծրագիր:

12. Անհատական ծրագիրը հաստատում է Ռեկտորը:

13. Փորձաշրջանի բովանդակության նվազագույն պահանջներն են՝ վարութային փաստաթղթերի նախագծերի մշակումը, գործերի և վարույթների նյութերին ծանոթացումը, իրավական վերլուծությունների կատարումը, սովորական աշխատանքային ընթացակարգերին ծանոթացումը:

14. Յուրաքանչյուր շաբաթվա համար ունկնդիրը փորձաշրջանի ղեկավարի հետ կազմում է շաբաթական ծրագիր *(Ձև 2)*, որում տվյալ շաբաթվա ավարտին նշվում է կատարողականը:

15. Շաբաթական ծրագիրը և դրա կատարողականը հաստատվում է փորձաշրջանի ղեկավարի կողմից:

16. Փորձաշրջանի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո Ունկնդիրը պարտավոր է շաբաթական պարբերականությամբ Ակադեմիա ներկայացնել տվյալ ժամանակահատվածի շաբաթական ծրագիրը և դրա կատարողականը: Ակադեմիան ստուգում է ունկնդրի գրառումների համապատասխանությունը անհատական ծրագրին՝ ուսումնասիրելով նաև փորձաշրջանի ղեկավարի նշումները կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

17. Փորձաշրջանի նկատմամբ հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Ռեկտորն իրավասու է Ակադեմիայի աշխատակցին գործուղել փորձաշրջանի անցկացման վայրի հաստատություն:

IV.ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

18. Փորձաշրջանի արդյունքներն ամփոփում է Ակադեմիան:

19. Փորձաշրջանի ավարտից հետո ունկնդիրը Ռեկտորին է ներկայացնում փորձաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն *(Ձև 3)*, որը հաստատվում է փորձաշրջանի ղեկավարի կողմից:

20. Փորձաշրջանի ավարտին փորձաշրջանի ղեկավարը Ռեկտորին է հանձնում գնահատագիր *(Ձև 4)*, որով փորձաշրջանի ընթացքում ունկնդրի գործունեության արդյունքների, նրա դրսևորած գործնական և անձնական հատկանիշների նկարագրությամբ ունկնդրի փորձաշրջանը գնահատում է դրական կամ բացասական:

21. Ունկնդրի փորձաշրջանի գնահատման չափանիշները բխում են փորձաշրջանի անցկացման անհատական ծրագրով նախատեսված առաջադրանքների կատարողականից՝ հաշվի առնելով փորձաշրջանի ընթացքում ունկնդրի ցուցաբերած նախաձեռնությունն որձաշրջանի ընթացքում ունկնդրի հաճախումները, կարգապահությունը և պարտաճանաչությունը:

22. Փորձաշրջանի ղեկավարի կողմից ունկնդրի փորձաշրջանի գնահատման չափանիշներն են՝

22.1. հստակ, մատչելի, փաստարկված, համոզիչ դատավարական ակտեր կազմելու ունակությունը.

22.2. իրավական հարցերի շուրջ կարծիք հայտնելու, դիրքորոշումը հիմնավորելու, բանավիճելու ունակությունը.

22.3. աշխատանքային տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, տրամաբանելու և որոշումներ կայացնելու ունակությունը.

22.4. գործընկերների հետ շփումներում անձնային և մասնագիտական հատկանիշներ դրսևորելու ունակությունը.

22.5. Դատական և դատախազական գործունեության ընթացքում ձևավորված սովորութային կանոններին և ընթացակարգերին տիրապետելու աստիճանը:

23. Ունկնդիրը համարվում է փորձաշրջանն անցած, եթե այն գնահատվել է դրական:

Ձև 1

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ
Արդարադատության ակադեմիայի
ռեկտոր _____

« » _____2014թ.

_____ թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց անհատական ծրագիր

Ունկնդրի անուն, ազգանուն _____

Փորձաշրջանն անցնելու վայր_____

	Առաջադրանքներ	***Առաջադրանքների կատարմանն ուղղված գործողություններ և դրանց ծավալ***
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		

Սույն անհատական ծրագրի շրջանակներում փորձաշրջանի ղեկավարը յուրաքանչյուր շաբաթվա համար ունկնդրի հետ կազմում է շաբաթական ծրագիր, որում տվյալ շաբաթվա ավարտին նշվում է կատարողականը:

Ծանոթացա անհատական ծրագրին.
Փորձաշրջանի ղեկավար՝ _____ _____
Ստորագրություն Անուն, ազգանուն

_____
Պաշտոն

Փորձաշրջանի շաբաթական ծրագիր

(_____)

Ունկնդրի անուն, ազգանուն _____

Փորձաշրջանն անցնելու վայր_____

	Առաջադրանքներ	***Կատարողական***
1.		
2.		
3.		
4.		

Ունկնդիր՝ _____
Ստորագրություն

Փորձաշրջանի ղեկավար՝ _____ _____
Ստորագրություն Անուն, ազգանուն

_____
Պաշտոն

Ձև 3

« » _____201 թ.

Փորձաշրջանի ամփոփ հաշվետվություն

Ունկնդրի անուն, ազգանուն _____

Փորձաշրջանն անցնելու վայր՝ _____

_____դատարան/դատախազություն

Հաշվետվություն

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ունկնդիր՝ _____ _____
Ստորագրություն Անուն, ազգանուն

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
Փորձաշրջանի ղեկավար՝ _____ _____
Ստորագրություն Անուն, ազգանուն

_____
Պաշտոն

_____ թեկնածությունների ցուցակում ընդգրկված ունկնկդիր

_____

ունկնդրի անուն, ազգանուն

ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԳԻՐ

1._____

(Հաստատության անվանումը, որտեղ ունկնդիրն անցել է փորձաշրջանը)

2. _____, _____, _____

(Հաստատության իրավաբանական և էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը)

3. Փորձաշրջանի ժամկետը:

_____ (սկիզբը) _____ (ավարտը)

4. _____, _____

Փորձաշրջանի ղեկավարի անուն, ազգանուն, հայրանունը և պաշտոնը

5. Փորձաշրջանի ընթացքում ունկնդրի գործունեության արդյունքների, նրա դրսևորած գործնական և անձնական հատկանիշների նկարագրությունը

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

6. Ելնելով սույն գնահատագրի 5-րդ կետում նշված փաստերից, ունկնդիր _____

_____ (ունկնդրի անունը և ազգանունը) փորձաշրջանի արդյունքները գնահատում եմ՝

- o «դրական»
- o «բացասական»

Փորձաշրջանի ղեկավար՝ _____ _____

Ստորագրություն Անուն, ազգանուն

_____

Պաշտոն

Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի նախագահ՝ *Հ.Բեդևյան*

2014 թուականի 6

ք. Երևան